

Արձանագրություն հ. 5

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
05.06.18 թ. կայացած նիստի

Նիստին մասնակցում էին ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ.Գեղամյանը, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից 35-ը:

Նիստը նախագահում էր ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, պրոֆեսոր Գ.Ղարիբյանը:

Օրակարգում՝

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի ընտրություն:

Դեկանի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցում էին երկու թեկնածուներ՝ ինքնառաջադրմամբ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Միքայելյանը և գործող դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը, որի թեկնածությունն առաջադրել էին ֆակուլտետի 4 ամբիոնները (առաջադրումները կցված է գործին):

Նախագահողը այբենական կարգով ձայն տվեց դեկանի տեղի համար հայտարարված մրցույթի մասնակիցներին: Նրանք ներկայացրեցին իրենց ծրագրերը (կցվում են):

Դեկանի թեկնածուներին տրվեցին հարցեր:

Մ.Միքայելյանին առաջադրված հարցերը.

Կ.Խաչատրյան. հարց 1. Ժամանակին մեր ֆակուլտետում ամբիոնի վարիչ եք եղել, նշեք խնդրեմ Ձեր ամբիոնի վարիչ եղած տարիներին ինչ՞ ձեռքբերումներ եք ունեցել: **Հարց 2.** Ձեր հողվածում դուք նշել եք, որ ֆակուլտետում կան դասախոսներ, ովքեր տԵքստը անգիր արած լսարան են մտնում, կարո՞ղ եք ավելի կոնկրետ և անվանական խոսել:

Մ. Միքայելյան. նախ ասեմ ձեռքբերումների մասին : Ինձ հաջողվեց հարթել ամբիոնի ներսում տարբեր խմբավորումների միջև եղած հակասությունները: Իմ աշխատանքի տարիներին կանխել եմ կաշառակերության դեպքեր, դասախոս է հեռացվել

աշխատանքից: Փորձել եմ աշխույժություն մտցնել ամբիոնում գիտական առումով, կազմակերպվել են սեմինարներ, պաշտպանվել են թեկնածուական ատենախոսություններ, ամբիոնի աշխատողներն ստացել են գիտական կոչումներ, կարծում եմ դրանք էլ են ձեռքբերում:

Ձեր երկրորդ հարցին կպատասխանեմ, որ կան դասավանդողներ, ովքեր իրենց դասընթացի հիմնախնդիրներին նույնիսկ ծանոթ չեն, ես անուններ չեմ տա:

Ա.Առաքելյան. հարց 1. Կրթական ոլորտի այս մրցակցության պայմաններում, եթե դուք դառնաք դեկան, բակալավրիատի ուուցման ի՞նչ ծրագրեր կառաջարկեք: **Հարց 2.** Դուք Ձեր ելույթում ասացիք, որ դասախոս-ուսանող կապը պետք է շատ սերտ լինի, կարող եք ասել քանի՞ ուսանող եք պատրաստել հետագա կրթությունը շարունակելու համար և տեղյա՞կ եք արդյոք, թե մեր ֆակուլտետն ավարտած ուսանողներն ի՞նչ ձեռքբերումներ ունեն այլ երկրների համալսարաններում:

Մ.Միքայելյան. Բակալավրիատում իմ կարծիքով պետք է դասավանդվեն նեղ մասնագիտական բնույթի մոդուլներով դասընթացներ: Ձեր 2-րդ հարցի պատասխանն այն է, որ մեր ամբիոնից ոչ մի ուսանող չի գործուղվել եվրոպական երկրներ և ոչ մի գրանտի մեր ամբիոնը չի մասնակցել:

Հ.Սարգսյանին առաջադրված հարցերը:

Կ.Խաչատրյան. հարց.- Աշխատաշուկայի հետ կապի մասին է իմ հարցը, խնդրում եմ ասեք, թե ապագայում ինչպես եք տեսնում կրթություն-գործարար աշխարհ-աշխատաշուկա կապը:

Հ.Սարգսյան. Ես կարծում եմ, որ խոշոր գործատուներին պետք է ներգրավել կրթական գործընթացում: Նաև ասեմ որ ֆակուլտետը համագործակցում է <<Իմեքս-գրուպ>> -ի, ԿԲ-ի հետ և մեր կապերը գնալով ընդլայնվում են:

Կ.Սահակյան. հարց.- Դուք Ձեր ծրագրային ելույթում խոսեցիք ուսանողների սոցիալական վիճակի բարելավման մասին, ինչպե՞ս եք դա պատկերացնում և ի՞նչ կասեք դասախոսների սոցիալական վիճակի բարելավման մասին:

Հ.Սարգսյան. Ես թվարկեցի այն աղբյուրները, որոնք կարող են լրացուցվիչ եկամուտներ բերել: Պետք է սկսել գիտա-կրթական բազայի կատարելագործման աշխատանքներից՝ աշխատավարձ, նոր տեխնոլոգիաներ և այլն: Պետք է ասեմ, որ այստեղ մենք անելիքներ ունենք:

Այնուհետև նախագահի առաջարկությամբ սկսվեցին ելույթները:

Ա.Մարկոսյան. Այսօրվա ընտրությունը ուրախացնում է նրանով, որ մենք ունենք այլընտրանք, մրցույթը լինում է այն դեպքում, երբ մեկից ավելի թեկնածուներ են հավակնում նույն պաշտոնին, այլապես պետք է մրցույթը չեղյալ համարել և դա պետք է գործի պրոֆեսորա-դասախոսական բոլոր պաշտոնների համար: Կցանկանայի որ նոր ընտրված դեկանը ֆակուլտետում զարգացներ գիտությունը, լուծեր ֆինանսական հարցերը, և վերջապես, ֆակուլտետը պետք է զբաղվի Հայաստանի տնտեսության զարգացման հիմնախնդիրներով: Նորանշանակ դեկանին կլինդրեի նաև փոխել զանգի հնչեղությունը, ավելի դուրեկանով:

Վ.Բոստանջյան: Հայաստանի բուհական կրթական համակարգում ԵՊՀ-ն առանձնահատուկ տեղ ունի, որում յուրահատուկ տեղ է զբաղեցնում Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը: Ժամանակին երբ որ ես տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու համար առաջարկում էի Թ.Մանասերյանի թեկնածությունը, մեր դեկանը բերեց Մ.Միքայելյանին: Պարոն Միքայելյան դուր միգուցե լավ դասախոս էք, լավ մասնագետ, ունեք մասնագիտական փորձ, բայց ես ուղղակի խոսող մարդ եմ, այլ բան է, երբ մարդ միայն իր աշխատանքի համար է պատասխանատու, և բոլորովին այլ, երբ դու պետք է տանես ամբողջ մի ֆակուլտետի ծանր բեռը, որը երկար տարիներ մեծ հաջողությամբ իր ուսերին կրում է Հ.Սարգսյանը: Նա մեծ ջանքեր է ներդրել ֆակուլտետում գիտական և կրթական մակարդակը բարձր մակարդակի հասցնելու պատվավոր գործում: Չնայած քվեարկությունը փակ, գաղտնի է, ես բաց տեքստով ասում եմ, որ իմ ձայնը տալու եմ Հ.Սարգսյանին:

Ս.Դավոյան: Գործող դեկան Հ.Սարգսյանին ճանաչում եմ ուսանողական տարիներից:

Գնահատում եմ նրա գիտական միտքը, մարդկային անկեղծ պահվածքը, որը նրա մարդկային լավագույն արժանիքներից մեկն է:

Կցանկանայի որ դեկանության նոր ժամանակահատվածում առաջնային նշանակություն տրվեր գիտական արդյունքների առևտրայնացման խնդիրներին: Քանի որ պ-ն Սարգսյանն ունի դեկանության ավելի մեծ փորձ, որը նաև հաջողված է, նախընտրելի է Հ.Սարգսյանի թեկնածությունը:

Ա.Առաքելյան: Շատ կարևորում եմ Միքայելյանի մասնակցությունը այս գործընթացին, որովհետև դա հնարավորություն տվեց կատարելու համեմատություն թեկնածուների ծրագրերի ու մակարդակների միջև: Իսկ ինչ վերաբերվում է դրամաշնորհներին, որ Ձեր ամբիոնը չի ստացել պ-ն Միքայելյան, պետք է ասեմ, որ դրամաշնորհներ ստանալը տքնաջան աշխատանքի արդյունք է, ոչ մեկին երկնքից դրամաշնորհ չի ընկնում:

Ես ընտրելու եմ Հ.Սարգսյանին:

Ռ.Գևորգյան: Մեր ֆակուլտետում 5 տարի է ինչ գործում է գիտական սեմինար, պ-ն Միքայելյան, եկեք մասնակցեք և կտեսնեք թե դեմոկրատիան ինչպես է լինում: Մենք ունենք սեմինարի արդյունքների հրապարակումներ արտասահմանյան ամսագրերում: Այս միտումը պետք է շարունակվի: Մենք համագործակցում ենք աշխարհի շատ համալսարանների հետ: Արդի ժամանակաշրջանում շատ կարևոր է ճկուն լինել:

Ա.Մինասյան: Վերջին տարիներին ես այլ պաշտոնավարման եմ անցել, բայց ինձ համարում եմ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի սան, իմ գիտական դեկավարն է եղել պ-ն Ղարիբյանը, իսկ ավարտական աշխատանքը կատարել եմ պ-ն Սարգսյանի դեկավարությամբ: Միքայելյանին ճանաչում եմ շատ տարիներ ի վեր: Հ.Սարգսյանին ճանաչում եմ որպես ուսանող, որպես գործընկեր և արժևորում եմ այն, որ սահմանադրական տնտեսագիտության կենտրոնի ստեղծմամբ վերլուծության առարկա դարձավ սահմանադրականությունը: Մա շատ եմ արժևորում և ջանք ու եռանդ չեմ խնայի որ այն դառնա ՀՀ տնտեսության զարգացման հիմնախնդրային ծրագիր: Ես որպես ՀՀ

քաղաքացի, որը երագում է արմատավորված տեսնել երկրում սահմանադրականությունը, իմ ձայնը տալիս եմ Հ.Սարգսյանին:

Հ. Մնացականյան : Կարևոր է տեսնել մարդու դերը ֆակուլտետում, առաջարկում եմ կանոնակարգերում փոփոխություններ մտցնել այն առումով, որ ֆակուլտետում աշխատող ցանկացած մարդ առաջխաղացում ունենա , այլ ոչ թե դրսից գան և զբաղեցնեն պաշտոնները, հատկապես դեկանի պաշտոնը:

Թ.Թորոսյան: Ըստ կանոնակարգի պետք է շեշտը դնել ծրագրերի վրա, ոչ թե անձերի: Այդ պատճառով ծրագրային դրույթներն առաջնային են: Ով որ ընտրվի դեկան պետք է հաշվի առնի երկու թեկնածուների արժեքավոր առաջարկությունները:

Ա.Դարբինյան: Վերջին 10-ամյակում եղել եմ պետական քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովի նախագահ և առաջարկել եմ ուշադրություն դարձնել որոշ հարցերի վրա: Որպես ԿԲ-ի ներկայացուցիչ շեշտում եմ կապը, որ գոյություն ունի ֆակուլտետի և ԿԲ-ի միջև, ուրախ եմ արձանագրել, որ բավականին արդյունավետ աշխատանք է կատարվում: Ճանաչելով և պ-ն Միքայելյանին և պ-ն Սարգսյանին, ոչ մի կերպ չնսեմացնելով պ-ն Միքայելյանի արժանիքները, գտնում եմ, որ ֆակուլտետն ավելի կշահի, եթե ընտրվի պ-ն Սարգսյանը:

Կ.Խաչատրյան: Մենք այսօր ոչ միայն դեկան ենք ընտրում, այլև առավել արդյունավետ գիտա-կրթական միջավայր: Տարիների ընթացքում ֆակուլտետում թիմ է ձևավորվել պ-ն Սարգսյանի ղեկավարությամբ: Մեր ամբիոնը միաձայն երաշխավորել է պ-ն Սարգսյանին և ես քվեարկելու եմ նրա օգտին:

Գ.Ղարիբյան ԵՊՀ-ում աշխատում եմ 70 տարի: Պրոռեկտոր եղած տարներին ջանքեր գործադրեցի, որպեսզի նորից վերաբացվի ֆակուլտետը: Ինձանից հետո ֆակուլտետը ղեկավարել է Հ.Սարգսյանը, որը կարողացել է ֆակուլտետը նոր հարթակի վրա դնել:

Միքայելյանի կողմից արված դիտողությունները նույնպես պետք է հաշվի առնվեն: Նոր ընտրված դեկանը պետք է նպաստի կոռուպցիայի, հովանավորչության բացառմանը, պետք իրար նկատմամբ լինել հանդուրժողական և համբերատար:

Վ.Հովսեփյան: Իմ կարծիքով ֆակուլտետում սահմանափակվում են որոշ մարդկանց սահմանադրական իրավունքները: Ինչու՞ պետք է ես պրոֆեսոր լինելով 0,25 դրույքով աշխատեմ, իսկ ոմանք նույնիսկ 1,5 դրույքով:

Տ.Վարազդաստյան: Լինելով ֆակուլտետի շրջանավարտ և մտահոգվելով ֆակուլտետի վարկանիշով, կցանկանայի որ նորընտիր դեկանը ուշադրություն դարձներ կրթության որակի բարելավմանը, քննությունների ընթացքում խտրական դրսևորումների բացառմանը, դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառմանը:

Գ.Գևորգյան: Ես չեի ուզում խոսել, բայց պ-ն Մնացականյանի այն առաջարկը, որ ֆակուլտետում պաշտոնները և հատկապես դեկանը պետք է ֆակուլտետի ներսից լինի, ինձ չգոհացրեց: Ամբողջ աշխարհում ընդունված կարգ է, մրցունակ անձն է զբաղեցնում պաշտոնը:

Որոշեցին՝ ընտրել 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գ.Բարխուդարյան (նախագահ), Կ.Խաչատրյան, Ի. Վարդանյան:

Լսեցին՝ հաշվիչ հանձնաժողովի նախագահ Գ.Բարխուդարյանի հաղորդագրությունը փակ, գաղտնի քվեարկության արդյունքների մասին: Քվեարկությանը մասնակցել են խորհրդի 36 անդամներից նիստին ներկա գտնվող 35-ը, բաժնվել է 35 քվեաթերթ: Մ.Միքայելյանի օգտին քվեարկել են 8-ը, դեմ՝ 27-ը, Հ.Սարգսյանին կողմ են քվեարկել 27-ը, դեմ՝ 8-ը, անվավեր քվեաթերթեր չկան:

Որոշեցին՝ հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը և հիմք ունենալով փակ, գաղտնի քվեարկության արդյունքները Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրված համարել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Լևոնի Սարգսյանին:

Նիստի նախագահող, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Գ.Ա.Ղարիբյան

Ֆակուլտետի գիտխորհրդի քարտուղար
տ.գ.թ., պրոֆեսոր

Ա. Հ.Համբարձումյան

